ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< 09 >> 05 2014թ.

N: _____

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ հայրենակիցներ, հարգելի՛ վետերաններ:

Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 69-րդ և Արցախի ազատագրման 20-րդ տարելիցների կապակցությամբ: Մայիսի 9-ը մեր պապերի, հայրերի և որդիների պատմական հաղթանակների միասնական տոնն է, ինչպես նաև հայրենիքի խաղաղ վերածննդի գրավականը:

Այսօր մեզ համար կրկնակի տոն է մենք նշում ենք Շուշիի ազատագրման 22-րդ տարեդարձը: Իրենց պապերի և հայրերի արժանավոր ժառանգները Շուշիի ազատագրմամբ մայիսի 9-ին հաղորդեցին նոր իմաստ: Ցավոք, մեր խաղաղությունը մեզ պարտադրվեց բազմաթիվ ու թանկ զոհերի գնով: Փա՛ռք մեր հերոսներին:

Մենք խոնարհվում ենք բոլոր այն հայրենասեր, խիզախ հայորդիների առջև, ովքեր իրենց կյանքը նվիրեցին ազատության վեհ գաղափարին և պարտավոր ենք միշտ ուշադրության արժանացնել արցախյան ազատամարտում զոհված մեր եղբայրների ընտանիքներին, մշտապես օգնել և նրանց կյանքը դարձնել հնարավորինս բարեկեցիկ:

Կրկին անգամ շնորհավորում եմ բոլորիս և հատկապես Մեծ Հայրենականի վետերաններին ու Արցախյան պատերազմի մասնակիցներին Հաղթանակի և խաղաղության օրվա կապակցությամբ, ցանկանում քաջառողջություն, երջանկություն և տոնական բարձր տրամադրություն:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ